ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

« 20 » « դեկտեմբերի » 2024թ. N 221

«ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ԱՁ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

## Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

**Հարգելի՛ տիկին Մանուկյան,**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Անի Մանուկյան» ԱՁ-ի միջև 02.10.2024թ-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-3-ԵԽ-5-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնման - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ: Սակայն «Անի Մանուկյան» ԱՁ-ի կողմից վերոնշյալ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Անի Մանուկյան» ԱՁ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը և այն համարելով ամբողջությամբ լուծված: 39946.24 (երեսունինը հազար ինը հարյուր քառասունվեց դրամ, քսանչորս լումա) ՀՀ դրամի չափով, Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն

որոշմամաբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանգրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով «Անի Մանուկյան» ԱՁ-ին տրվում է 5 օր տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 3440 (երեք հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ և որակավորման ապահովման 5160 (հինգ հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ գումարները Շահառուի 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով: Սահնված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «Անի Մանուկյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանգրի ապահովումները կներկայացվի մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան ✉ 375037 Մ. Յաղուբյան 13 ☎ (010) 20-15-86, 20-65-92, maryizmirlyan.childcarecenter@mlsa.am